27 սեպտեմբերի 2007 թվականի N 1130-Ն

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԱՄՈՒՂԻ ՔԱՋԱՐԱՆ-ԱՐԱՐԱՏ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Արարատ հատվածի շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Արարատ հատվածի և դրա անվտանգության գոտիների ծրագիծը՝ 197,4 կիլոմետր երկարությամբ և 987 հեկտար ընդհանուր մակերեսով՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Վայոց ձորի ու Արարատի մարզպետներին՝

1) երկամսյա ժամկետում Քաջարանի, Ջերմուկի, Եղեգնաձորի քաղաքային համայնքների և Փայահանի, Շենաթափի, Գեղիի, Լեռնաձորի, Որոտանի, Լորի, Գետաթաղի, Դարբասի, Հերհերի, Կարմրաշենի, Մալիշկայի, Գլաձորի, Վերնաշենի, Գետափի, Աղավնաձորի, Ռինդի, Չիվայի, Ելփինի, Զանգակատան, Վարդաշատի, Ուրցալանջի, Լանջառի, Լուսաշողի, Լանջանիստի, Շաղափի, Նորավանի, Շաքիի, Սպանդարյանի, Անգեղակոթի, Սառնակունքի, Ծղուկի, Գորայքի, Ուրցաձորի և Գոռավանի գյուղական համայնքների ղեկավարների հետ համատեղ ուսումնասիրել և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ նշված տարածքներում գտնվող հողերի (այդ թվում՝ անտառային ֆոնդի հողերի) կատեգորիաների անհրաժեշտ փոփոխություն կատարելու, գազամուղի սահմանափակումների գոտիները և այդ գոտիներում հողօգտագործման նկատմամբ սահմանափակումները սահմանելու, ինչպես նաև այլ անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի դիմաց փոխհատուցում կատարելու վերաբերյալ.

2) ելնելով բնապահպանական խնդիրներից՝ անհրաժեշտության դեպքում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն գազամուղի ծրագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ.

3) Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Արարատ հատվածի շինարարության ժամկետները չխախտելու նպատակով <ՀայՌուսգազարդ> փակ բաժնետիրական ընկերությանը, որպես պատվիրատուի, առաջարկել կապալառուների հետ կնքվելիք պայմանագրերով շինարարական և նախագծման աշխատանքներն իրականացնել զուգընթաց, ըստ փուլերի՝ ապահովելով նախագծերի բնապահպանական փորձաքննությունը:

4. Աշխատանքների ավարտը սահմանել մինչև 2009 թվականի հունվար ամիսը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
Ս. Սարգսյան

2007 թ. հոկտեմբերի 8
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
սեպտեմբերի 27-ի N 1130-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ծ

ՔԱՋԱՐԱՆ-ԱՐԱՐԱՏ ԳԱԶԱՏԱՐԻ D=720 ՄՄ (ՔԱՋԱՐԱՆ-ՍԻՍԻԱՆ, ԱՆԳԵՂԱԿՈԹ-ՋԵՐՄՈՒԿ, ՋԵՐՄՈՒԿ-ԱՐԱՐԱՏ)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան